գիւղերի հողերը։ Այս վերջին շրջանում հայ բնակչութիւն տեղաւորելը ունէր և ռազմական–քաղաքական նշանակութիւն։ Ելենովկայի և մի շարք ուրիշ հողեր մտցուեցին պետական ֆոնդի մէջ։

Միւս գաւառներում հողային յատուկ կոմիտէները մասամբ կազմուած էին, բայց դեռ գործի չէին անցած. որոշ գաւառներում էլ չէին կազմուած։ Հողային յատուկ կոմիտէների գործունէութիւնը ղեկավարում էր ինքը՝ գիւղատնտեսական նախարարը պետական գոյքերի բաժնի վարիչ Պ. Կանդուրալեանի գործակցութեամբ։

Գիւղատնտեսական նախարարութեան գործունէութիւնից յիշենք և պետական կաթնատնտեսական օրինակելի ագարակի և պանիր–իւղ գործարանի կազմակերպումը Կարսի շրջանի Պետրովկա գիւղում։ Գործի ղեկավարութիւնը յանձնուած էր փորձուած կաթնատնտես Դիլանեանին։ Ագարակի համար ձեռք էին բերուած 300 ընտիր կովեր և անհրաժեշտ շէնքերն ու գործիքները։ Պատերազմը խանգարեց սկսուած գործը։

Պատերազմը թոյլ չտուեց աւարտել և Էջմիածնի առուի կառուցումը։ Այդ նպատակով 23 միլիոն ռուբլու վարկ էր բացուած և աշխատանքներն արդէն սկսուած էին։ Էջմիածնի առուի աւարտումը վիճակուեց խորհրդային իշխանութեան։ Նոյն իշխանութիւնը գլուխ բերեց և Շիրակի առուի շինութիւնը, որ նոյնպէս ծրագրուած ու ձեռնարկուած էր Հանրապետութեան օրով։

Չի կարելի լռութեամբ անցնել և Հայաստանի կօօպերացիայի վրայից, որ զարգանում էր արտակարգ թափով։ Յուլ. 1ը Հայաստանի կօօպերացիայի օրն էր, որ տօնուեց չքեղ հանդիսաւորութեամբ։ Այդ օր, Հայկօօպը — Հայաստանի Կօօպերատիւների Միութիւնը — իր մէջ պարփակում էր 350 կօօպերատիւ ընկերութիւններ։ Հայաստանի կօօպերացիան ունէր 95,000 անդամ։ Եթէ հաշուենք, որ իւրաքանչիւր անդամի ընտանիքը, միջին թուով, բաղկացած էր 4 հոգուց, ապա՝ Հայկօօպը պարենաւորում էր մօտ 400,000 մարդ։ 1919 թւի ընթացքում Հայկօօպը կառավարութիւնից ստացել էր փոխառութիւն 5 միլիոն ռուբլի, բայց հասարակութեան մատակարարել էր 15,844,191 ռուբլու մթերք և ապրանք։ 1920–ին կառավարութիւնը տուեց՝ վարկ ու փոխառութիւն, 30 միլիոն ռուբլի։ Կառավարութեան աջակցութեամբ տնտեսական մի առաքելութիւն ուղարկուեց Իտալիա, որտեղից բերուեց խոշոր քանակութեամբ հաղուստեղէն և այլ կարգի ապրանքներ։

Աչքի առաջ ունենալով Հայկօօպի կարևոր տնտեսական դերը երկրում՝ կառավարութիւնը որոշեց բաց թողնել նրան, իբրև փոխառութիւն, ևս 250 միլիոն ռուբլի, մէկ տարի ժամանակով և տարեկան 6 տոկոսով։ Այդ դրամով կատարելու էին գնումներ ներքին շուկայում, գնելու էին հում նիւթեր արտասահմանի հետ ապրանքափոխութիւն անելու համար և զարգացնելու էին արդիւնաբերական ձեռնարկները։

Հայկօօպի պաշտօնաթերթ «Հայաստանի Կօօպերացիա» երկշաբաթաթերթը Դ. Անանունի խմբագրութեամբ, ունէր և լուրջ գրական–հասարակական բաժին։